Այդ ժամանակ, 6րդ գնդի մէկ հարիւրեակը փոխ-գնդ. Մանեանի հրամանատարութեամբ հասաւ Հայրում և հրաման ստացաւ Ճոճկանի զօրախումբը ուժեղացնելու նպատակով 60 հոգի հետախոյզներ ուղարկել Ճոճկան, փոխ-գլխ. Պետրոսեանի տրամադրութեան տակ, իսկ մնացած ուժերով անցնել յարձակման ու գրաւել Լամբալու գիւղը՝ Հայրումում թողնելով պահեստի մի վաշտ:

Դեկտ. 20-ին տեղի ունեցան յամառ և արիւնահեղ կռիւներ: Կուռօ Թարխանեանի հարիւրեակը մի կողմ շպրտելով թշնամուն՝ գրաւեց Շուլաւերը: Իսկ նոյն ժամանակ, հաղարից աւելի վրացիներ, զրահապատ գնացքի աջակցութեամբ, համախմբուում էին Սադախլուի շրջանում:

Շուլաւեր—Սադախլուի շրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաշելու նպատակով՝ Դրօն հրամայեց գնդ.Տէր-Նիկողոսեանին, դեկտ. 21-ին, 1 գումարտակ ու 2 թնդանօթ թողնել Մեծ-Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժուել Արախլուի վրա: Սկսուեց տաք կռիւ: Մերոնք յարձակուում էին անվերջ, վրացիները յուսահատական դիմադրութիւն էին ցոյց տալիս: Գլխ.Մնացականեանի Շուլաւերի զօրամասը կռուի բռնուեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ: Մերոնք քանդեցին Սադախլու—Մամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը: Կուռօ Թարխանեանը յանդուգն յարձակումներ գործելով Աշաղա-Սարայլի ուղղութեամբ՝ գրաւեց մի թնդանօթ և մի գնդացիր: Այդ կռուում վիրաւորուեց ինքը՝ Թարխանեանը և սպանուեց նրա ձիաւորներից մէկը:

Ճակատամարտը Սադախլուի մօտ շարունակուեց անընդհատ: Վրացիները համարեա շրջապատուած էին և գրաւում էին միայն կայարանը, գիւղը և արևմտեան բարձունքը: Դեկտ. 22-ին, հակառակ թշնամու հրացանի ու գնդացիրների մրրկայոյզ կրակի, Ճոճկանի զօրախումբը փոխ-գլխ. Պետրոսեանի գլխաւորութեամբ, արհամարհելով գնդակների տեղատարափը, շարժուեց Սադախլուի վրա և յամառ ու երկարատև կռուից յետոյ գրաւեց կայարանն ու գիւղի հարաւային մասը, բայց օգնական ուժեր չստանալով՝ վրացիների հակայարձակման ու թեւից սպառնացող վտանգի տակ՝ քաշուեց նախկին դիրքերը՝ տալով մօտ 40 զոհեր: Փոխ-գլխ. Պետրոսեանը գրաւեց 2702 բարձունքը, փոխ-գնդ. Կորոլկովը՝ Դամիան, գլխ. Մնացականեանը՝ Շուլաւերը, փոխ-գնդ. Մանիեանը՝ Քերփիլի—2660 բարձունք գիծը: Վրացիները շարունակում էին նոր ուժեր բերել ու կենտրոնացնել Բոլնիս-Խաչէնի մօտ:

Դեկտ. 23-ին մեր ուժերը վերադասաւորուեցին՝ նորից յարձակման անցնելու համար: Եւ նոյն օրը, երկարատև ու բուռն ճակատամարտից յետոյ, 4րդ գնդի 12 վաշտերը, փոխ-գլխ.Ասլանեանի հրամանատարութեան տակ, գրաւեցին Սադախլուն: Մերոնց ձեռքը գերի ընկան 6 սպայ, 126 զինուոր, 2 կոլտի գնդացիր, աւելի քան 100 վագոն պարէն, ռազմամթերք ու փամփուշտ, 3 շոգեշարժ և ուրիշ պաշարեղէն: Մեր կորուստներն էին. փոխ-գլխ. Ալեքսանդրովը վիրաւոր, 7 զինուոր սպանուած և 11 վիրաւոր: